

է: Պէտք է աւելացնել, որ չը նայած մի քանի անգամ ուղղած բողոքներն և զանգարաններն՝ հողերը իշխանութիւնը անուշադիր է թողել քահանայի և ժողովրդի մէջ ծագած այդ անբաւականութիւնը:

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆ ԶՈՒՍԵՒ ԴԱՏԸ

Միտարարութեան նախագահ Բրիտանիոյ դրած իր նամակում Զօլայ, ի միջի այլոց, հարցնում էր թէ ինչ միջոցներ են ձեռք առնված, որ իր դատը հանդարտ կերպով անցնի: «Եթէ ինձ սպանեն, իմացէ՛ք որ յապանող դուք էք, պարիսոն», ասում էր հռչակաւոր դրողը: Տրանսիական կառավարութիւնը շտապեց ցոյց տալ, որ ինքը չէ ուղում Զօլայի սպանողը դառնալ: Դատի օրը Վէրսալի ներկայացնում էր պաշարման դրութեան մէջ զբաղած մի քաղաք: Նրկաթիւնը կայարանից դէպի դատարանի շինութիւնը տանող փողոցում ոստիկանները թուով աւելի էին, քան հասարակութիւնը: Դատարանի մուտքը ոստիկանների անդնդհատ շղթայով էր փակված. ներս էին, թողնում միայն տոմսակներ ունեցողներին: Դատարանը ծայրէ ծայր լի էր: Նիստը բացվելուց առաջ հասարակութեան մէջ լուր էր պատում, որ Զօլան մտադիր է հենց առաջին օրը հեռանալ դատարանից, եթէ իրան թող չեն տալ խօսել Գրեյֆուսի գործի մասին: Այդ պատճառով Զօլայի թշնամիները պատրաստված էին և դաշինքում լավեցին սպանական աղաղակներ, հենց որ Լաբօրի սկսեց կարգով իր եզրակացութիւնները: Կարգը հաստատվեց այն ժամանակ, երբ նախագահը սպանաց դատարանի վաշիճը: Բայց ցոյցը նորից սկսվեց, երբ դատաւորները հեռացան փաստաբանի յայտարարութիւնը քննելու համար: Երբ այդ ժամանակ Զօլան և Պերէ մտեցան քարտուղարին, որ ստորագրելու վճռաբեկ դառնալով, դալքերէս-յից մէկը կանչեց. «Դուք Գրեյֆուսից եք: Դատարանը քննելու արդարեւ չէ: Այդ ժամանակ դալքերէս փանդակապատի մօտ երեսը Դեբուէն, որը, թեպէտ ինչու, չարտնական էր կանչել. «Դուք Կորէք Գրեյֆուսից, փակիւտներ, անպիտաններ, վաճառվածներ, դաւաճաններ»: Դատարանը զանգուղ ընդհանուր պրօկուրօր Բէրքարն փորձեց յիշեցնել Դեբուէնին թէ հարկաւոր է դատարանի դաշինքում քաղաքակրթի լինել, բայց Դեբուէնը, կանգնած տիկին Զօլայի մօտ, շարունակում էր աղաղակել: Ամենը ոտքի կանգնեցին: Վերջապէս, նախկին արմատական պատգամաւոր Գրեյֆուսը կանչեց. «Դուք տալէք այդ բղաւորը:—Ո՛վ է կանչում, հարցրեց Դեբուէնը, և երբ Գրեյֆուսը կանչեց իր անունը, նա դուռը վերակցեց. «Դուք փակուտ էք, դուք կաշառված էք հրեաներից, դուք անպիտան էք: հապա եկէ՛ք այստեղ:—Լաւ է, դուք ցած իջէ՛ք, պատասխանեց Գրեյֆուսը: Այդ աղաղակները դրաւեցին դատարանին: Ուշադրութիւնը և նըրանք վերադարձան իրանց տեղը: Նախագահը սպանաց հեռացնել մարդկանց տրեւանները, իսկ ընդհանուր պրօկուրօրը հրամայեց ոստիկաններին հեռանալ դաշինքից ամեն մէկին, ով կաղաղակէ: Երբ յետոյ դատարանը մեքսեց Լաբօրի պատճառաբանութիւնները և մեղադրութիւնները վճռեցին հեռանալ դատարանից, իսկ նըրանց հետ դուրս գնաց և հասարակութեան մեծ մասը, ամբարի մէջ, որ սպասում էր դրսում, լրվեցան աղաղակներ. «Կորէք Զօլա, կորէք հրեաները: Ցոյցերը սաստկացան, երբ դատարանից սկսեցին դուրս գալ վկանները: Կարգիւ Պերէնին տեսնելու. այն ամբարի մի մասը կանչեց՝ «Կեցէ՛ք դուք, կորէք Զօլա», իսկ միւս մասը աղաղակում էր «Կեցէ՛ք հանրապետութիւնը, կեցէ՛ք Զօլա»: Ավանդելի երկու կողմից հայհոյանքներ, որոնք շատով կուր փոխվեցան: Գործում էին բռնուցները և ձեռնափայտերը: Զը նայած ոստիկանների միջամտութեան, ցոյցերը անդադար վերանորոգվում էին: Դեբուէնը, ի հարկէ, աղմուկի ցոյցերով ընդունեցին. նրան չըջապատել էին ամեն կողմից, սեղմում էին նրա ձեռքը և շնորհաւորում էին: Զօլա, Պերէն և Կլեմանսօ անհկատելի կերպով հեռացան և անվտանգ Պարիզ հասան:

Պարիզից «НОВОСТИ» լրագրին հեռագրում են յուլիսի 8-ից. «Զօլայի հեռանալը Գրեյֆուսից բացատրվում է հետեւեալ կերպով: Գրեյֆուսի օրէնքներով, բացակայութեան ժամանակ տրված դատարանի օրինական ոյժ է ստանում մեղադրվածին յայտնելուց 5 օր յետոյ, եթէ այդ ժամանակ նրա կողմից բողոք չը տրվի: Եթէ մեղադրվածը բացակայ է, հնչողութեայ ժամանակամիջոցի վրա՝ աւելացվում է մի մի օր ամեն տասն կիլոմետր հեռաւորութեան համար, ուր դր-

անվում է մեղադրվածը դատարանի տեղից: Զօլան որոշել է օգտվել այդ օրէնքից այն հաշուով, որ դատարանը յանձնվի իրան մի քանի ամսից յետոյ, երբ, նրա կարծիքով, տրամադրութիւնը կը փոխվի և նոր դատարանը թող կը տալ ապացոյցներ ներկայացնել: Իրաւադիտական շրջաններում ոչ ոք Զօլայի մեկնումը փախուստ չէ համարում, այլ միայն դրժաւարական մի միջոց՝ Գրեյֆուսի գործը պարզելու համար: Զօլան կը վերադառնայ նոյապատուր քաղէին և, ինչպէս ասում են, կը ընտրվի առ այժմ Նօրվեգիայում Բիերնսոնի մօտ:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Մարդիկ հազարում են Ֆրանսիական լրագրիներն, որ եւրօպական դիպլոմատիայի կողմից արած առաջին քայլերը ցոյց տուին, թէ Մակ-Կլինթոն մտադիր է պահանջել Սպանիայից անպայման հրաժարվել Կուրա և Պորտո-Րիօ կղզիներից, նոյնպէս և զիջել Ֆիլիպինեան կղզիներում մի մեծ կտոր հող՝ ածուխի կայարաններ հիմնելու համար: Սպանիական լրագրիները այդ պայմանները անուանում են «անհարկ» և ենթադրում են, որ հաշտութեան մասին կարելի է խօսել միայն այն ժամանակ, երբ միայն Կուրայի ապագայի խնդիրը կը լինի զբաղմունք մէջտեղ: Ի նկատի առնելով, որ կարլոսները սպանում են ապստամբութիւնը՝ հենց որ հաշտութեան մասին բանակցութիւններ կը սկսվեն, սպանիական կառավարութիւնը զենքի է հրաւիրել 150,000 հետեակ և 14,000 ձիաւոր զօրքեր և յայտ ունի կազմակերպել երկու հարիւր հազարանոց մի բանակ, որ բաւական կը լինի կարգն ու խաղաղութիւնը Սպանիայում պահպանելու համար: Վաշինգտոնից հաղորդում են, որ ծովապետ Ռէվին լրագրութիւն է տրված Տարկաւոր դէպքում կուր սկսել դերմանական նաւերի դէմ: Մանիլա են ուղարկված ամերիկական երկու մարտանաւեր, այնպէս որ ոչմերի առաւելութիւնը ծովապետ Ռէվին կողմը կը լինի:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բօստօն, յուլիսի 5-ին
Երէկ Միացեալ Նահանգաց աղաղակն տօնէր: Երբեք մէկ ու քանից դար առաջ ամերիկացիք անկախութիւն հրատարակելին այս օր, անկից ի վեր տարուէ տարի եռանդով կը տօնուի հասարակապետութեան ծննդեան տարեկարծը: Այս տարի այդ օրը աւելի մեծ շուքով տօնեցին ամերիկացիք, իրենց անկախութեան տարեկարծի օրը քոյր հանրապետութեան մի ծնունդն ալ միասին տօնելու անուովը հաճոյքին համար: Սանտ-Նազօրի փառաւոր յաղթութիւնը նոր փայլ մը տուաւ աղաղակն տօնին: Երբեք մէկ ու քանից դար առաջ ամերիկացիք յաղթութեամբ կը դիմադրէին ամերիկեան թշնամիներուն. ցամաք ելած զինուորները իրենց ընկերներու դիմադրութեամբ վրայէն քաշելով կամաց կամաց կը յառաջանային դէպի Քուրալի նախկին մայրաքաղաքը: Զօրապետ Շէֆիլդի 17,000 զինուորները՝ միացած քուրալիներու հետ՝ պաշարեցին քաղաքը և յարձակմամբ սկսան զբաղել շրջակայ ամրութիւնները և բլուրները, սակայն, յարձակումը ողջան քայլ, զիմադրութիւնն ալ այնքան կատարել էր: Անցեալ ուրբաթ օր ամերիկացիք 1000-էն աւելի իրաւոր և մեռեալ թողով միայն կրցան տրել Սան Ժուան կոչուած բլուրը: Սպանիական մարտանաւերը քաղաքին նաւահանգիստէն անդնդհատ կրակ կը տեղային բլուրն ի վեր յառաջացող եանքի զինուորներու վրա: Սակայն հոն էր ամերիկեան բանակի ծաղիկը. երկուստաւոր բանակը «Աստղաղաղը դրօշակ» աղաղակն երգը հրդեհով յառաջ ստալաց, թշնամիներու որոտման մէջ հեռուէն իսկ կը լսուէր ողբերիչ երգը, վերաւոր զինուորները զլուրներն վեր բարձրացուցած կը դիտէին հնչելին վսեմ երգին ներշնչեալ տողերը: Վերջապէս բլուրին դադարվեց ծածանեցաւ ամերիկեան դրօշակը, միւս կողմէն բանակին ուրիշ մաս մը դրաւեր էր էլ Քանիէ ամրութիւնը, նաւերը փոշի վերածներ էին հռչակաւոր Մօրօ բերդը: Սակայն այս բոլոր յայտնութեանց համար մեծ զին վճարեց ամերիկեան բանակը. վերաւորները հրամանաւոր-նաւերը փոխադրելու դժուարութիւնները, ստակալի ապրութիւնը, թշնամույն ճարահատ կատաղութիւնը կանցողցին եանքի զօրապետը, որ չէր ուզեր այդպիսի սուղ գնով առնել Սանտ-Նազօն: Կրիակի օր լրագրիները խիստ տխուր դայերով կը նկարէին իրանց վիճակը: Զօրավար Շէֆիլդը նոր գտնելը կուզէր իր կառավարութիւնէն ելած զինուորները քաղաքը դրաւելու անբաւական համարելով: Քաղաքը դրաւելն ալ այնքան մեծ յաղթութիւն մը

սեպել չէր կարելի, քանի որ սպանիացի ծովապետը նաւահանգիստէն կրնար ուժակոծել յաղթական եանքիները:

Այս պարագային սպանիացի ծովապետ հիմնապէս փոխեց դրութիւնը անակնկալ շարժումով մը: Այն օրէն, երբ գիտցուեցաւ, թէ «Մերիմակ» շոգենաւը իրապէս չի գոցեր նաւահանգիստին բերանը, միշտ վախ կար թէ Մէրիմակը փորձէր ամերիկեան նաւերու մէջէն ճամբայ բանալով դուրս փախչել իր բանտէն, այդ պատճառաւ անդնդհատ կը հսկէին եանքիները. այսու հանդերձ ամերիկացիք այնքան ընչ կաղնեկալէին այս սպանիական շարժումը, որ դրօշակիւր նաւը «New-Uork», ծովապետ Սամուելի առաջնորդութեամբ, դէպ արեւը պտոյտի ելած էր և միայն եկաւ վերջին հարձակմանը տալու արդէն կործանելու վրա եղած սպանիական նաւերուն: Մէրիմակ անձամբ կառավարողէր իր նաւատորմի վրա. իր դրօշակիւր նաւը միւսներէն առաջ սկսած էր ջրանցքէն դուրս տանել, երբ վտանգի նշանները եանքի նաւերն իրարու փոխանակեցին, և «Iowa», «Indiana», «Oregon», «Massachusetts», «Texac», «Brooklyn» և փղբիկ «Corsair» յառաջ սուրաջին ճամբան փակելու: Եանքիները կրակ չըբին, թող տուէր, որ սպանիացի նաւերը դուրս գան նաւահանգիստէն և հեռանան ծովեզր բերդերու պաշտպանութենէն: Մէրիմակն դէպ աւրեւմուտը նաւեց իր բոլոր թշնամիներէն կրակ ու ծուխ ժայլկեցով. իրարու ետեւ կերթային «Colon», «Viscaya», «Oguendo» և թորթիլանաւերը: Թանկարժ ամերիկացոց մարտանաւերը կրակ սկսան տեղալ, սպանիացի նաւերը կարծես զնդակներու տարափի մէջէն կերթային, բայց կը յառաջանար սպանիացի կործն նաւապետը, մինչև Մօրօ բերդէն 10 մղոն անդին վերաւոր և անկարող նաւ ստիպուեցաւ ծովեզրը: Երբ նաւային կեանքը փրկելու: Միւս նաւերը արդէն կործաներ կամ վառել էին. ծովապետ 1000-էն աւելի զինուորներով գերի բռնուեցաւ: Ամերիկացոց կորուստը բաղաւորաբար չատ աննշան էր, մէկ զինուոր սպանուած, մէկ քանի հոգի վիրաստուած, պղտիկ նաւ մը վնասուեց էր միայն: «Բաց ծովուն փոսկիները մուկի պէս թակարդի մէջ մեռնելէն լաւագոյն համարեցի» ըսաւ պարտուած ծովապետը, երբ գերի կրկնար թշնամույն ձեռքը:

Սպանիական նաւատորմի այս ջնջումը մեծ ազդեցութիւն պիտի ունենայ պատերազմի ընթացքին վրա. Սանտ-Նազօն կատարելապէս առնուած է, Քուրան իր բաղդին թող տրուած Պանթօլին հետ: Սպանիան այլ ևս անկարող է օգնութիւն ըրել իր զինուորներուն. պաշարի պակասը, ողբերկուած եանքի զինուորներուն նաւերու յարձակումը կը լնցուցեն ինչպէս պապական միացածը:

Սանտ-Նազօրի շուրջ մեծ քաղութեամբ կուռեցան քուրալից հայրենասէրները, որոնց մասին մեծ գովեստով կը խօսեն բոլոր թղթակցիները. եթէ պակասութիւն մը ունէին, այն ալ իրենց կատաղութեան և վրէժնորդութեան չափազանց լինէր էր: Զօրապետ Գարսիա իր քուրալիներով արգելեց Սանտ-Նազօրի օգնութեան հասնելը. կիսամերիկ, անօթի զինուորները թանգալով ծառայութիւն մատուցելու ամերիկեան բանակին: Այդ անօթի զինուորները ինչ ազահութեամբ սկսան ճաչակել ամերիկեան կերակուրները. ինչպէս շատերը իրենց ստամոքսին մէջ քաղցր գետնախնձորէն դատ ուրիշ բան ունեցած չէին ամրանելով, յանկարծ չափէն աւելի ուտելով՝ քաննէն աւելի մարդիկ մեռան: Թղթակցի մը կը նկարագրէ երկուստաւոր կիսամերիկ յեղափոխական մը, որ ծառի մը չափէն տակ մեռած էր ապուխտի կտոր մը բերանը և միւս ձեռքը ստամոքսին վրա, բայց, կը յաւելու թղթակցիցը, «Երեսին վրա անսաման գտնուածութիւն յայտնող ծաղիկ մը կար»: Ասկից վերջ ամեն հայրենասէր քուրալից ամերիկեան ապուխտը ունենայ թէ ոչ, նոյն երկնային ծաղիկով կրնայ մեռնել. կերակուրէն թանգալին բան մը առաւ նա իր մարդասէր բարեկամներէն, — իր սիրած հայրենիքի աղաղակութիւնը:

Սպանիայի կոյր յամառութիւնը դեռ կրնայ երկարել պատերազմը իր աղետներով, բայց ինչքան ալ յամառ, արդիւնքը նոյնը պիտի լինի, ինչ որ ամեն մարդ կրնար պատերազմէն առաջ գուշակել առանց մարգարէ լինելու:

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պարսկաստանի նախկին սահրապա՝ Մեր-դա-Ալի-Սաֆի-Բանը, հռչակաւոր Ամին-Սուլթանն, որ արքայութեան վրա ընդհանրապէս չի ընդունուած էր Ղուա քաղաքը, նորից կալիքի որ պաշտօնին: Մուլաֆթեզին Գաւի համոզվեց, որ առանց նրան դուռը է կառավարել երկրը, ուստի և հրաւիրեց արքայական-

նին շտապով գալ Թէհրան: Յուլիսի 1-ից Պարսկաստանի կառավարութեան ղեկը նորից անցաւ նախկին սահրապաի ձեռքը: Սպասվում են նախաւոր փոփոխութիւններ:

ՄՇԱԿԻ ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 10 յուլիսի: Կուրայի իւնտան հեռագրեց Գարսիային և կուրալի ուրիշ օֆիցերներին, թէ պակասական է ապստամբների վարմունքը ամերիկացիների հետ Սանտ-Նազօրի մօտ, թէ Կուրայի գործը շատ կը վնասվի, եթէ ապստամբները կը յամառվեն իրանց ընթացքի մէջ: Նիւ-Եօրկ, 10 յուլիսի: «Evening Journal»-ում հրատարակված է հեռագիր Սանտ-Նազօրից, որը հաղորդում է, թէ Գարսիա նամակ քրեց նախորդին, որի մէջ ասում է, թէ ապստամբները սրանից յետոյ ամերիկացիների հետ միասին չեն գործի, այլ անկախ նրանցից, այնպէս, ինչպէս գործում էին մինչև նրանց գալը: Ինքն այդ պատճառով իր զօրքերով հեռանում է դէպի լեռները:

ՄԱԴՐԻԴ, 10 յուլիսի: Հաւանայից հեռագրում են. «Ամերիկացիները ափ իջան Մանդանիլայի շրջաններում: Սպանիական զօրքերը թշնամիներ էին արձակում ամերիկացիների վրա, որոնք պատասխանում էին: Սպասվում են, որ ամերիկացիները յարձակում կը գործեն Մանդանիլայի վրա ծովից և ցամաքից:

ԼՈՆԴՈՆ, 10 յուլիսի: «Daily Telegraph» լրագրին Վաշինգտոնից հեռագրում են, որ Վատսոնի նաւատորմը կը մասնակցի Պորտո-Րիօի արշաւանքին և ապա դրանից յետոյ կը հեռանայ դէպի Սպանիա:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 յուլիսի: Գերեալ Սնդեթսօն հեռագրում է Մանիլայից, թէ Ավստրալիոյ հրատարակեց զիկտատուրա և պատերազմական դրութիւն և թէ ապստամբները յայտ ունեն ձեռք բերել Ֆիլիպինեան կղզիների անկախութիւնը:

ՀԱՄԻՆՆԱ, 13 յուլիսի: 18,000 ամերիկացիներ ափ իջան Մանդանիլայի մօտ: Բերդապահ զօրքը պատրաստ է պաշտպանվելու համար: Նաւատորմի մի մասը դեռաց դէպի Նիքարա: Կարծում են, որ նա միաժամանակ կը ուժակոծի Սիէնֆուէզու և Մարիէ:

ՀԱՄԻՆՆԱ, 13 յուլիսի: Ապստամբների բաղամալի զօրաբաժինները յարձակում գործեցին Նիքարայի վրա, որտեղից փախաւ լեռնային պահապան զօրքը ստիպված էր հեռանալ, հերոսաբար պաշտպանվելուց յետոյ: Ամերիկացիները ափ իջան Տայա-Բակու և բաղամալի զօրաբաժինների օգնութեամբ շրջապատեցին Տուանաս-Սալա, որի վրա մտադրութիւն ունեն յարձակում գործել:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 10 յուլիսի: Յուլիսի 9-ին հասան իշխան Ֆերդինանդը և իշխանուհի Մարիա-Լուիզա իշխանուրդի Բօրիսի հետ միասին: Գիւմաւորները համար եկել էին արտաքին զօրքերի միջնորդը, պալատի կոմսիտանը, թիւրքաց ամբողջ դեսպանութիւնը և սլաւօնական ընկերութեան ներկայացուցիչները: Կայսերական սենեակներում հաւաքվեցին Մեծ Իշխանները: Մեծ հիւրերին դիմաւորեցին Մեծ Իշխան Վադիմիր Ալեքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնա: Ապա պալատական կառքերով դնացին Ալեքսանդրիա ամառանոցը, ուր ընդունվեցին Նոյա Կայսերական Մեծութիւնները կողմից: Ընդունելութիւնից յետոյ բողաւական իշխանուհի և իշխանուհին դնացին պետերօֆեան Մեծ պալատը, ուր նրանց համար սենեակներ էին պատրաստված: 7-րդ ժամին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդօրովնա Ալեքսանդրիայից ժամանեցին Մեծ պալատը, փոխադրելուց ինչպէս տուեցին բողաւական դուքին և քաղաք ժամից յետոյ վերադարձան Ալեքսանդրիա: Երկուշաբթի 8 ժամին Պետերօֆի պալատի Սպիտակ դաշինքում տեղի ունեցաւ ընտանեկան ճաշ, և այդ ճաշին Ալեքսանդրիայից ժամանեցին Թագաւոր Կայսրը, Մարիա Ֆէօդօրովնա և Ալեքսանդրա Ֆէօդօրովնա Կայսրուհիները, Մեծ Իշխանները և Իշխանուհիները, Կայսերական ընտանիքի ուրիշ անդամները և պրինց Լիւդվիգ Նապօլէօն:

ԿԱՆԵՑՈ, 10 յուլիսի: Կրեմլէի ժողովը միաձայն ընդունեց վարչութեան նախագիծը. վիճաբանութիւնները կը շարունակվեն մի քանի մասնաբանութիւնների վերաբերմամբ:

ՊԱՐԻԶ, 10 յուլիսի: «Figaro» լրագրից հաղորդում է, որ Էստերադիի մօտ գտնված դօկումենտները նշանակութիւն ունեն: Էստերադիի պատրաստ է, իբր թէ, հետաքրքիր մեղադրութիւններ անել:

ՊԵՏԵՐԲՈՒԳ, 10 յուլիսի: Մոսկվայի համա-

